Պատերազմների ժամանակ, իւրաքանչիւր հակառակ կողմերի, թէ յաղթութեան եւ թէ յաղթելու միջոցին, բնակիչների վիճակը սարսափելի էր: Օրինակ, մի ցեղ կամենում է խլել միւս ցեղի ձեռքից երկրի այս կամ այն մասը նա կամ յաղթելով տիրում է, կամ աւար առնելով, թալանելով ամէն հանդիպածը, ետ է դառնում: Այսպիսի դէպքերում ժողովուրդը թողնում է իր տունը, տեղը, մշակութեան դաշտերը, եւ իր գլուխը միայն ազատելու համար, պատսպարւում է լեռների անմատչելի տեղերում: Կռիւը տեւում է երկար: Անասունները, անտէր մնալով, թշնամին կողոպտում է. հունձքը, անխնամ մնալով, չորանում է, ոչնչանում է, եւ կռիւներից յետոյ վրայ է հասնում մի նոր, ամենասարսափելի թշնամի-սովը:

Ժողովուրդը միշտ գտնւում էր անվերջ երկիւղի եւ յուսահատութեան մէջ: Նա չգիտէր, թէ էգուց կարո՞ղ է հանգիստ լինել, որովհետեւ թշնամին միշտ կանգնած էր որպէս ասում են՝ նրա քամակին: Կռիւների փոթորիկների մէջ եթէ մի անգամ զրկուեցան նրա մշակութիւնները բերքից, միւս օրը նա ուտելու հաց չունէր: Որովհետեւ նա ապագայի համար պաշար չէ պահում, նախ, որ ապահով տեղ չունի պահելու, երկրորդ, աւելորդ ծանրութիւնը միշտ արգելում է նրա փախուստը թշնամու ձեռքից, երբ նա աշխատում է ազատել իր գլուխը միայն:

Կռիւները, ժողովրդի անդադար անցնելը մէկ տիրապետողից դէպի միւսը, սպառում էին բնակիչների կեանքը սրով, կրակով եւ սովով:

Յանկարծ երկրի նախկին տիրապետողն իրան յաղթած է համարում. որպէսզի նա յաղթողի համար շահուելու ոչինչ չթողնէ, հրդեհում է ամբողջ գիւղորայք, աւերում է քաղաքները, կրակ է տալիս հասունացած հունձքերին, եւ բոլորովին անապատ դարձնելով երկիրը, որ պատկանում էր իրան, այնպէս թողնում է եւ հեռանում: Այսպիսի հանգամանքներում քուրդը կորցնելու ոչինչ չունէր, որովհետեւ նա մի ժամանակաւոր հիւր էր. իսկ այն բոլոր կրակի նիւթ դարձած շինութիւնները պատկանում են հայ կամ օտարազգի բնակիչներին. այն բոլոր մշակութեանց արդիւնաբերութիւնը նրանց ձեռքերի վաստակն է: Նոյն բարբարոսութեամբ վարւում էր եւ յարձակողը, երբ տեսնում էր թէ տիրելու անկարող է: Նա խոյս էր տալիս կռոի դաշտից, իր հետքից թողնելով աւերակներ եւ ամայութիւն:

Ժողովուրդը միշտ գտնւում էր նոյն դրութեան մէջ, որպէս մի թռչուն, որի բոյնը քանդած էր չար երեխայի ձեռքով. նա նստած է միշտ օրօրոող տերեւի վրայ եւ չգիտէ ի՞նչ անէ: Բնակիչը սիրտ չունէր կրկին նորոգելու իր խրճիթը, որովհետեւ մտածում էր՝ արդեօք երկա՞ր կարող է բնակուել նրա մէջ. սիրտ չունէր միւս անգամ ցանել իր արտը, որովհետեւ յոյս չունէր, թէ կը